Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովագյուղի Մուրացանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

Թեմա՝ Գործնական աշխատանքի կազմակերպումը <<Կերպարվեստ>> առարկայի շրջանակներում

Վերապատրաստող, մենթոր՝ Սիլվա Ամրազյան

Ուսուցիչ՝ Մերի Պողոսյան

Երևան 2024

Բովանդակություն

1.Ներածություն - 3

2.Ինչպես կազմակերպել գործնական աշխատանքները - 5

3.Գործնական աշխատանքները և դրանց նպատակները - 9

4.Ինչ է մոտիվացիան,նրա դերը կերպարվեստի դասերին -12

5.Գործնական աշխատանքի կազմակերպման օրինակ - 14

6.Եզրակացություն -19

7.Օգտագործված գրականության ցանկ-20

Ներածություն

Կերպարվեստը դա տարածական արվեստների մի բաժին է, որը միավորում է գեղանկարչությունը, քանդակագործությունը, գրաֆիկան և դեկորատիվ կիրառական արվեստը: Կերպարվեստը արտացոլում է իրականությունը և տարածության մեջ ստեղծում է դիտարկելի, ակներև կերպարներ:

Ժամանակակից հանրակրթական դպրոցում յուրաքանչյուր ուսումնական բնագավառում ուսումնական գործունեության տեսակները նախագծելիս պետք է նկատի ունենալ ոչ միայն տվյալ առարկայի գծով գիտելիքների հաղորդման,այլև սովորողների մեջ նշված հատկանիշների ձևավորման և զարգացման անհրաժեշտությունը: Իր յուրահատկության, բովանդակության, ինչպես նաևուսումնական բոլոր առարկաների հետ փոխադարձ կապ ստեղծելուբացառիկ հնարավորության շնորհիվ, կերպարվեստը կոչված է խթանելու սովորողների մտավոր և հոգևոր ներուժի բացահայտումը, զարգացումը և հարստացումը, ընդհանուր աշխարհայացքի ձևավորումը:

Կերպարվեստի տարբեր տեսակներին հաղորդակցվելը և ինքնուրույն գեղարվեստական գործունեություն իրականացնելը նպաստում է

1 . իրականության գիտակցական և զգայական ընկալման ձևավորմանը

2 .վերլուծական և ստեղծագործական մտածողության զարգացմանը

3. անձի ինքնաճանաչմանը և մտահորիզոնի ընդլայնմանը

4. սովորողների գեղարվեստական կրթությանը, գեղագիտական և բարոյական դաստիարակությանը

5. ազգային հայրենասիրական և մարդասիրական զգացումների արմատավորմանը:

Ուսուցչի կարևորագույն գործառույթը սովորողների ուսուցման, դաստիարակության և զարգացման գործընթացները մանկավարժորեն կառավարելն է՝ հաշվի առնելով նրանց հոգեբանական , տարիքային առանձնահատկություններն ու ընդունակությունները, զարգացման մակարդակը, կրթական կարիքները՝ ստեղծելով համապատասխան մանկավարժական պայմաններ: Մանկավարժական գործընթացի կառավարումը նախևառաջ սկսվում

է նպատակի առաջադրումից, սովորողների ֆիզիկական և հոգեկան առանձնահատկությունների հաշվառումից, առանց որոնց հնարավոր չէ արդյունավետորեն իրականացնել մանկավարժական գործընթացը: Մանկավարժական գործընթացի արդյունավետ իրականացման համար կարևոր են նաև մանկավարժական հայտորոշումը և արդյունքների կանխատեսումները, որոնք ուսուցչին տալիս են մեկ քայլ առաջ տեսնելու , սեփական գործունեության արդյունքները նածագիտելու հնարավորություն, տեսականը վերածել գործնականի:

Կարևոր է նշել այն հանգամանքը, որ մանկավարժական պատմության ընթացքում առաջատար մանկավարժները կարևորել են գործնական աշխատանքները առանձնահատուկ ուշադրություն են դարձրել դրանց իրագործմանը:

Հետազոտական աշխատանքի արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքներով, որ աշակերտը ուսումնական հաստատությունից դուրս գա այնպիսի գիտելիքներով, որոնք նա կկարողանա կիրառել գործնականում՝ ստանալով տեսական գիտելիքներ , կատարի ճիշտ վերլուծություն, կայացնի ինքնուրույն որոշումներ և գտնի դրանց կիրառման արդյունավետ ուղիները:

Հետազոտության նպատակն է բացահայտել գործնական աշխատանքների դերն ու կարևորությունը, ինչպես նաև զարգացնել գործնական աշխատանքի որակը կերպարվեստի շրջանակներում:

Հետազոտության խնդիրներն են ուսումնասիրել սույն թեմային առնչվող գրականությունը, իրականացնել գործնական աշխատանքներ, գրանցել արդյունքները նշել դրանց կազմակերպումը առարկայի դասավանդման ընթացքում, կարևորել մոտիվացիան, ներկայացնել գործնական աշխատանքների կազմակերպման օրինակներ:

Ինչպես կազմակերպել գործնական աշխատանքները

Հատուկ մոտեցում է պահանջվում գործնական աշխատանքների կազմակերպմանն ու անցկացմանը: Դրա համար անհրաժեշտ է մշակել դասի պլանը, որոշել գործնական աշխատանքի տեղը դասի ընթացքում, բովանդակությունն ու դրա կազմակերպման ձևերն ու մեթոդները, ու այս դեպքում աշխատանքը կլինի արդյունավետ: Նախորոք մանկավարժը պետք է նախատեսի աշխատանքի բարդության մակարդակը, ծավալը, դժվարություններն ու հնարավոր սխալները, որոնք կարող են ծագել երեխաների մոտ՝ տվյալ աշխատանքի կատարման ընթացքում: Աշխատանքի կազմակերպման ընթացքում անհրաժեշտ է մտածել նաև սովարողներին ցուցաբերվող օգնության ու ստուգման ձևերի մասին: Հատկապես տարրական դասարաններում գործնական աշխատանքի կազմակերպման նպատակով անհրաժեշտ է կիրառել բազմաթիվ մեթոդական եղանակներ, որոնք կնպաստեն արագ յուրացնել գործողությունների որոշակի հաջորդականություն կատարելու և սեփական գործունեությունը կազմակերպելու համար անհրաժեշտ կարողությունները:

Աշխատելու կարողությունները մշակվում են նպատակաուղղված վարժությունների և աստիճանաբար բարդացող առաջադրանքների միջոցով: Մինչ գործնական աշխատանքի համար առաջադրանքներ տալը , այդ առաջադրանքների տեսակները յուրացվում են նախապես ուսուցչի հետ միասին կատարվող աշխատանքների միջոցով: Այնուհետև առաջադրանքների այս կամ այն մասը կատարում են աշակերտները, և այդպես շարունակ վերջապես հնարավորություն են ստանում տրված ամբողջ առաջադրանքը կատարել ինքնուրույն: Ուսուցիչը պետք է որոշի առաջադրանքների տեսակը, դրա տեղը դասի ընթացքում, բացատրի նպատակը և աշխատանքի կատարման քայլերի հաջորդականությունը, հետևի սովորողների աշխատանքին՝ անհրաժեշտության դեպքում ցուցաբերելով օգնություն ռանձին աշակերտների: Աշխատանքի ստուգումը ևս կատարվում է ուսուցչի ղեկավարությամբ, որի արդյունքների քննարկմանը ուսուցիչը մասնակից է դարձնում ամբողջ դասարանին:

Գործնական աշխատանքները կիրառվում են բոլոր ուսումնական առարկաների շրջանակներում՝ անպայմանորեն կառուցելով առարկայի չափելի

վերջնարդյունքների վրա, ինչն էլ պայմանավորում է առաջադրանքի և աշխատանքի տեսակի ընտրությունը:

Գործնական աշխատանքները բազմազան են՝ պաստառի ձևավորումից մինչև էքսկուրսիաների ընթացքում ձեռք բերած գիտելիքների , տեսածի, լսածի ներկայացում ամենատարբեր միջոցներով, որը կարող է լինել պաստառ, սահիկ և այլն:

Առաջադրանքները պետք է ընտրել այնպես, որ երեխաների մոտ նպաստեն դրանց նկատմամբ հետաքրքրության զարգացմանը: Առաջադրանքների ծավալը պլանավորելու համար, անհրաժեշտ է հաշվի առնել սովորողների աշխատանքի տոմպը: Ժամանակը ճիշտ կազմակերպելու համար պետք է նախապես կատարել ինքնուրույն աշխատանքի համար պլանավորած առաջադրանքը: Այդ դեպքում առաջադրանքի կատարման համար ուսուցչի կողմից ծախսված ժամանակը անհրեշտ է բազմապատկել երեքով , հենց այդքան ռոպե է անհրաժեշտ աշակերտի կողմից առաջադրանքի կատարման համար: Առաջադրանքի կատարման ընթացքում ուսուցիչը կարող է հասկանալ, թե ինչ տարրեր կարող են արգելակել կամ արագացնել սովորողների աշխատանքը:

Գործնական աշխատանքները կարող են իրականացնել ինչպես անհատապես, այնպես էլ խմբերով, ինչպես դպրոցում, տանը և ինչու չէ, նաև բնության գրկում: Բնությունը ոգեշնչման լավագույն աղբյուրներից մեկն է: Բնության գրկում գործնական աշխատանքների կազմակերպումը զարգացնում է երեխայի երևակայությունն ու ստեղծագործական ունակությունները: Երեխան իր աչքերով է տեսնում տարածության մեջ շրջապատող առարկաների օրինաչափությունները, դրանց ընդհանուր տեսքը հեռավորության մեջ, և պատկերման առանձնահատկություններն ուսումնասիրվում են հեռանկարչության մեջ:

Ստորև՝ գործնական աշխատանք բնության գրկում

Բնությունից ստացած տպավորությունները կարող է կիրառել այլ նկարներում:Օրինակ՝ բնության մեջ ուսումնասիրելով տերևը, ծաղիկը, ցողունը և այլն, դրանք երեխաները կարող են ավելի հմտորեն պատկերել բնանկարներում, դեկորատիվ աշխատանքներում, նատյուրմորտներում և այլն: Երեխան բացահայտում է բնությունը՝ տեսնելով արևի լույսը, առարկաներից ընկնող ստվերները, շարժվող ամպերը, և զգում է քամու շունչը: Այսինքն բնության գրկում գործնական աշխատանքների կազմակերպումը հիանալի միջոց է ուսումնասիրելու աշխարհն իր գույներով, զգալու այն, սովորելու բնությունից, ինքնուրույն դատողություններ անելու և տպավորությունները թղթին հանձնելու:

Սովորաբար, աշակերտները ոչ միաժամանակ են ավարտում գործնական աշխատանքը, եթե աշխատանքն ունի անհատական բնույթ: Գործնական աշխատանքների համար առաջադրանքներ ընտրելիս, անհրաժեշտ է հաշվի առնել , որ գիտելիքների ,կարողությունների ու հմտությունների յուրացման գործընթացում սովորողներից պահանջում է տարբեր ժամանակահատված: Այդ պատճառով նպատակահարմար է նախապես պատրաստել առաջադրանքներ, արագ աշխատողների համար՝ լրացուցիչ առաջադրանքներ:

Դժվար է ընտրել այնպիսի առաջադրանքներ, որոնք համապատասխանում են բոլոր աշակերտների ներուժին: Եթե առաջադրվում է պարզ, միատիպ վարժություններ, ապա առաջադրանքների տարբերակումը կարգավորվում է ծավալով: Առավել դժվար է, օրինակ ընտրել յուրաքանչյուր աշակերտի ներուժի համապատասխան առաջադրանքներ: Ակդ պատճառով ավելի նպատակահարմար է աշակերտներին հանձնարարել տարբերակված առաջադրանքներ՝ հաշվի առնելով սովորողների առանձին խմբերի ներուժը:

Բայց պետք է նշել, որ ըստ բարդության աստիճանի տարբեր առաջադրանքներ ընտրելը ավելի բարդ է: Եթե ընտրենք հեշտ առաջադրանք, որը համապատասխանում է թույլ աշակերտի ներուժին, դժվար չէ, բայց սա ունի իր բացասական կողմը: Այսինքն բացասական կողմը կայանում է նրանում, որ եթե թույլ կարողություններ ունեցող աշակերտը դասից դաս անընդհատ դյուրին աշխատանք կատարի նույն պահանջով , ապա այդպես կարող են խորանալ նրա զարգացման հետ կապված խնդիրները: Այդ պատճառով այդպիսի սովորողների համար ճանաչողական առաջադրանքների ընտրության ընթացքում ուսուցիչն իր առջև նպատակ է դնում, որ սկզբից աշխատանքում ներառել պարզ

առաջադրանքներ, այնուհետև աստիճանաբար յուրացման համար ներառել ավելի բարդ նյութեր: Գործնական աշխատանքը պետք է նպաստի սովորողի ճանաչողական ունակությունների ձևավորմանը և նախաձեռնողականության դրսևորմանը, իսկ դրա համար անհրաժեշտ է տալ այնպիսի առաջադրանքներ, որոնց կատարման համար կպահանջվի գիտելիքների կիրառում նոր իրավիճակներում: Գործնական աշխատանքը կազմելիս ցանկալի է, որ նախատեսված առաջադրանքները հետաքրքրեն սովորողներին: Առաջադրանքի բովանդակությունը պետք է մատչելի լինի աշակերտին, հենված լինի երեխաների կենսափորձի վրա, բայց միևնույն ժամանակ գտնվի նրանց զարգացման ,,մերձակա զոտում,, պարունակի որոշակի դժվարություն , որ սովորողը կարող է հաղթահարել:

Ցանկացած թեմայի շուրջ առաջադրանքների ընտրության ընթացքում պետք է հատուկ ուշադրություն դարձնել հասկացության բոլոր հատկանիշների բազմակողմանիորեն ամրապնդմանը, հստակ առանձնացնել այն կարողություններն ու հմտությունները, որոնք անհրաժեշտ են ձևակերպել և ամրապնդել:

Պատահականության բացառումը նպաստում է դասի արդյունավետության բարձրացմանը: Առաջադրանքների համակարգը պետք է կազմակերպել փուլ առ փուլ: Անհրաժեշտ է սկսել տիպային առաջադրանքներից, մանրամասն բացատրել դրանց դրանց լուծման մոթոդները: Աշակերտներին պետք է առաջարկել գործողություններ կատարել ըստ օրինակի:Որից հետո անհրաժեշտ է առաջադրել նույնատիպ առաջադրանքներ, այնուհետև տալ առաջադրանքներ՝ չափազանց համառոտ հրահանգ տալով: Իսկ վերջին փուլում նպատակահարմար է սովորողին տալ ստեղծագործական բնույթի առաջադրանքներ՝ ինքնուրույն աշխատելու նպատակով:

Գործնական աշխատանքները և դրանց նպատակները

Գործնական աշխատանքների դասակարգման հիմքում դրվում է սովորողի գործունեության ձևը , և ըստ դրա էլ գործնական աշխատանքները բաժանվում են երեք խմբի ՝

.**վերարտադրողական**, որոնք հնարավորություն են տալիս ցուցադրելու՝ ինչ է սովորել և ինչ է կարողանում անել սովորողը /օրինակ պատկերել պարզ առարկաներ և գունավորել ներկերով/

.**մասամբ որոնողական**, երբ սովորողը պետք էոչ միայն ցույց տա՝ ինչ է սովորել և ինչ է կարողանում, այլև կատարի լրացումներ, կատարի իրեն հանձնարարած առաջադրանքը /օրինակ գուներանգների օգտագործում, լույս ու ստվերի ընդգծում/

.**ստեղծագործական**, երբ սովորողը ինքը պետք է ինքնուրույն կամ խմբի անդամների հետ լուծում գտնի հանձնարարած առաջադրանքի համար՝ ցուցադրելով կարողությունների որոշակի մակարդակ /օրինակ ամբողջական պատկերի ստացում, ստացված նկարին նյութականության ու տարածականության հաղորդում/

Վերոնշյալից արդեն պարզ է դառնում, որ գործնական աշխատանքները բազմազան են՝ պլակատի ձևավորումից մինչև էքսկուրսիայի ընթացքում տեսածի ու լսածի ներկայացում աղյուսակի, ֆիլմի, ակնարկի տեսքով, երգի հորինումից մինչև նախագծի իրականացում, արդյունքների ներկայացում և կիրառում:

Նշված գործնական աշխատանքները կարող են իրականացվել ինչպես անհատապես, այնպես էլ խմբային աշխատանքի շրջանակում, դպրոցում տանը կամ այլ վայրում, գնահատվել միավորով կամ բառային բնութագրումներով: Արդյունքները կարող են ներկայացվել սովորողի կամ սովորողների խմբի ընտրությամբ՝ նպատակից ելնելով:

Աշակերտների կողմից իրականացվող գործնական աշխատանքները ստեղծագործական աշխատանքների ձևերից են: Գործնական են համարվում սովորողների կողմից այն աշխատանքները, որոնք վերեբերում են նրանց ձեռք բերած գիտելիքների , կարողությունների և հմտությունների գործնական կիրառություններին: Գործնական աշխատանքների ընթացքում պետք է իրականացվեն գիտելիքների որոնում, դրանց իմաստավորում, ամրապնդում , հմտությունների, կարողությունների ձևավորում և զարգացում, գիտելիքների ընդհանրացում և համակարգում: Գործնական աշխատանքներն ստեղծում են այնպիսի իրավիճակներ, որոնք սովորողներին մղում են ինքնուրույն դիտարկումներ և եզրահանգումներ անելու , վերլուծելու, ոչ ստանդարտ իրավիճակներում կողմնորոշվելու, համադրելու, լուծումներ գտնելու և այլն:

Գործնական աշխատանքները բազմազան են՝ մոդելավորում, տեսանյութերի ստողծում, բանավեճ, քննարկում, գունանկարի, գծանկարի և դեկորատիվ աշխատանքի կատարում, դերախաղի իրականացում, ծեփակերտում և այլն:

,,Կերպարվեստ,, առարկայի գործնական մասն իրականացվում է կերպարվեստի հիմնական տեսակների ուսումնասիրմամբ /գծանակար, գունանկար, քանդակ կամ ծեփակերտում և դեկորատիվ աշխատանքներ/:

Գծանկարը գրաֆիկայի միջոցով հարթության վրա ստեղծված պատկեր է: Գծանկարը գրաֆիկայի տեսակ է, որը հիմք է հանդիսանում նկարչական արվեստի բոլոր տեսակների համար:

Գունանկարչությունը կերպարվեստի տեսակ , գույներով որևէ մակերեսի վրա իրականության կերպարային պատկերում:

Քանդակագործություն, պլաստիկ արվեստներից մեկն է, կերպարվեստի տեսակ, որ պատկերումները կատարում է ծավալային եռաչափ մարմնավորումներով:

Դեկորատիվ կիրառական արվեստ, կերպարվեստի տեսակ, որն ընդգրկում է ստեղծագործական այն բնագավառները,որում ստեղծվում են գեղարվեստական իրեր:

Գործնական մեթոդների շարքում են՝

ա/ վարժություններ

բ/ գործնական աշխատանքներ

գ/ լաբորատոր աշխատանքներ

դ/ ճանաչողական խաղեր

Աշակերտին անհրաժեշտ են ոչ միայն տեսական գիտելիքներ տարբեր առարկաներից, այլ նաև այդ գիտելիքները աշխատանքային և հոգևոր գործունեության տարբեր ոլորտներում կիրառելու պրակտիկ կարողություններ և հմտություններ:

Վարժությունների մեթոդի դեպքում սովորողները բազմիցս կատարում են միևնույն գործողությունները, այսինքն վարժվում են յուրացված նյութը պրակտիկայում կիրառելու մեջ: Այդպիսով խորացնում են իրենց գիտելիքները , ձեռք բերելով համապատասխան կարողություններ ու հմտություններ, և զարգացնում են իրենց մտածողությունն ու ստեղծագործական ունակությունները

Գործնական աշխատանքների մեթոդի ֆունկցիան ձեռք բերած գիտելիքների կիրառումն է գործնական խնդիրների լուծման ընթացքում, որը նաև նպաստում է սովորողների գիտելիքների խորացմանն ու ամրապնդմանը: Աշակերտների կողմից գործնական աշխատանքների անմիջական կատարմանը նախորդում է ուսուցչի բացատրությունը, որը նպատակ ունի տեսականորեն իմաստավորել աշխատանքը և գործողությունների շարքի ցուցադրումը: Որից հետո աշակերտները կատարում են իրենց աշխատանքը,իսկ ուսուցիչը վերահսկում է նրանց գործողությունները:

Լաբորատոր աշխատանքների մեթոդի հիմնական ֆունկցիան սովորողների մեջ գիտափորձարարական հետազոտական աշխատանքի տարրական կարողություններ ձևավորելն է:

Այս մեթոդը սովորեցնում է աշխատել տարատեսակ նյութերի ու սարքերի հետ,ձևավորում են չափումներ, հաշվարկներ կատարելու, փորձի արդյունքներն ամփոփելու, վերլուծելու և եզրակացություններ անելու կարողություններ:

Ճանաչողական խաղը, որպես ուսուցման մեթոդ՝ մոդելավորման մի ձև է , հատուկ կազմակերպված իրադրություն, որից սովորողներին առաջարկվում է ելք գտնել:

Գործնական աշխատանքի նպատակն է սովորողների մոտ՝

ա/ զարգացնել հետաքրքրությունը ուսման հանդեպ

բ/ ձևավորել ստեղծագործական կարողություններ

գ/ ակտիվացնել գործնական և ճանաչողական գործունեությունը

դ/ զարգացնել մտածողությունը և գործնական հմտությունները

ե/ բոլորի ներգրավվածությունը ապահովել դասընթացում

զ/ զարգացնել անհատական, խմբային և համագործակցային աշխատանքային հմտությունները

է/ ստեղծել միջառարկայական և ներառարկայական կապեր

ը/ ամրապնդել գիտելիքները

Իզուր չի ասված չինական ասացվածքը.

Ասա ինձ, և ես կմոռանամ,

Ցույց տուր ինձ, և ես կհիշեմ,

Ներգրավիր ինձ, և ես կսովորեմ:

Ինչ է մոտիվացիան, նրա դերը կերպարվեստի դասերին

,,Եթե ձեր ներսում լսեք մի ձայն, որն ասում է <<դու չես կարող նկարել>>, ուրեմն նկարի անպայման, և այդ ձայնը լռելու է:>>

Վինսենթ Վան Գոգ

Մարդկային վարքագծի գրեթե բոլոր ասպեկտներում մոտիվացիան մեծ դերակատարություն ունի: Ցանկացած որոշում կայացնելիս: Ցանկացած որոշում կայացնելիս առաջնորդվում ենք մոտիվացիոն ներքին մղումներով:

Հոգեբանները խոսելով մոտիվացիայի մասին, նշում են, որ դա ներքին վիճակ է, ցանկություն, որն ակտիվացնում է վարքագիծը և ուղղորդում դեպի նպատակը: Այլ կերպ ասած՝ մոտիվացիան կարիքների ու ցանկությունների ազդեցությամբ թելադրվող վարքագիծն է:

Մեկ այլ սահմանման համաձայն՝ մոտիվացիան գործընթաց է, որը սկիզբ է դնում, ուղղորդում և պահպանում դեպի նպատակը տանող վարքագիծը:

Մոտիվացիան խթան է, որը ստիպում է գործել: Ընդ որում՝ տարբեր են և՛ նպատակները և՛ խնդիրները: Խնդիր կարող է լինել թե՛ ծարավը հագեցնելու համար /նպատակ/ մեկ բաժակ ջուր խմելը, թե՛գիտելիք ստանալու համար /նպատակ/ գիրք կարդալը: Այսպիսով մոտիվացիան մարդու վարքի, տեսական և գործնական գործունեության խթանման համակարգ է:

Կերպարվեստի դասաժամերին անհրաժեշտ է զարգացնել մոտիվացիա, ինչը շատ կարևոր է հատկապես երեխաների համար: Չնայած շարժառիթների

բազմազանությանը,կան ընդհանուր գործոններ, որոնք ազդում են դրանց զարգացման վրա: Այդ գործոններն են՝ զգացմունքները, հետաքրքրությունը, հաջողությունը, նորությունը, հարմարավետությունը, ուսուցչի իրավասությունը, կապը կյանքի հետ:

Կերպարվեստի դասերը լայն հնարավորություն են տալիս երեխաների ճանաչողական և ստեղծագործական գործունեության զարգացման համար: Դա բաղցատրվում է նրանով, որ մի կողմից դասերը պահանջում են ստեղծագործական գործունեություն, մյուս կողմից վիզուալ արվեստի դասերին բնորոշ է ընդգծված գեղագիտական կողմնորոշումը: Ուրախությունն ու հաճույքը, որ երեխան զգում է գեղեցկության հետ հանդիպելիս՝ նպաստում է բարության, կարեկցանքի և համակրանքի ձևավորմանը շրջապատող աշխարհի հանդեպ:

Մոտիվացիան պահանջում է դասի նախապատրաստման մեծ աշխատանք, ինչպես նաև յուրաքանչյուր երեխայի զարգացման առանձնահատկությունների վերաբերյալ խորը պատկերացում: Ուսման մոտիվացիայի համար պետք է կենտրոնանալ ոչ միայն դասի բովանդակության վրա / այսինքն այն թե ինչ պետք է սովորեն երեխաները/,այլ թե ինչպես պահպանեն իրենց հուզականությունը,լավատեսությունը, ինքնքվստահությունը, որ հանդիսանում է խթան ինքնքզարգացման համար: Այս խնդիրը հաջողությամբ լուծելու ուղիներից մեկը դասի մեջ խթանող, ընկերական մթնոլորտի, միջանձնային հարաբերությունների համատեղումն է մեթոդների ու տեխնիկայի համատարած օգտագորխման հետ, որոնք ուղղակիորեն աշխատում են դասի մոտիվացիոն բաղադրիչի վրա:

Այս համադրությունը ներառում է հետևյալ պայմանների գործոնները.

. Երեխաների նկատմամբ մարդասիրական վերաբերմունք

. Ապահովել ուսուցչի և դասընկերների հետ հաղորդակցությունն ու համագործակցությունը ուսումնական գործնական աշխատանքներում

. Զգացմունքներով մտածողության զարգացում

. Խթանել հետաքրքրքսիրությունը, ճանաչողական հետաքրքրությունները և ցանկությունները

Կերպարվեստի դասերը պետք է լինեն ամենատարբեր և ժամանակակից տեխնոլոգիայով: Դասասենյակը պետք է հագեցած լինի համապատասխան աշխատանքային տեխնիկայով, մոլբերտներով, լինեն թեմային համապատասխան դիդակտիկ նյութեր և կոլորիտային միջավայրով: Այս դասերը կարող են նաև ներկայացվել զբոսանքի, ներկայացման, վիկտորինայի, հարցազրույցի և այլ դասերի տեսքով:

Գործնական աշխատանքի կազմակերպման օրինակ ,,Կերպարվեստ,, առարկայից

Դասարան՝ 5-րդ

Դասի թեմա՝ /Ծառատունկ/

Դասի տեսակը՝ գործնական

Դասի նպատակը՝. նկարչական հմտությունների և կարողությունների ձևավորում

.երևակայության և ստեղծագործական կարողությունների զարգացում

.ձևավորել ինքնուրույն աշխատելու և գույների ու երանգների ճիշտ ընտրության կարողություն

.աշխատանքային դաստիարակության զարգացում

Վերջնարդյունք՝ ստեղծել գարնանային աշխատանքների /ծառատնկման/ պատկեր գունային գամմայի ճիշտ օգտագործմամբ

Դիդակտիկ նյութեր- ուսուցչի համար՝ գարնանային գյուղատնտեսական, ծառատնկաման աշխատանքների նկարներ, աշակերտների համար՝ նկարչական նյութեր և պիտույքներ

Խաչվող հասկացություններ-օրինաչափություն, համակարգ մոդելավորում, մասշտաբ,համամասնություն, քանակ

Ներառարկայական կապ- բնանկարի և կենցաղային ժանրի համադրում

Միջառարկայական՝ մայրենի, բնություն, տեխնոլոգիա

Վերառարկայական՝ կյանքում ծառ տնկելու խորհուրդը

Դասի ընթացքը

1.կազմակերպչական մաս

ա.աշխատատեղի կազմակերպում

բ.դիդակտիկ նյութերի ապահովում

գ.տանն ավարտած աշխատանքների ստուգում,թերությունների շտկում

Նոր թեմայի հաղորդում /Ծառատունկ/

Խթանման փուլ

Սկսել մտագրոհով-հարցերի միջոցով վերհանել աշակերտների գիտելիքները գարնան ու գարնանային աշխատանքների մասին:

Բնութագրել գարունը

Գարուն -կանաչ,ծիծեռնակներ,տաք, եռուզեռ,ծառեր,ծառատունկ,բողբոջներ, կապույտ երկինք,թռչունների ծլվլոց

Տրվող հարցեր

Ո՞ր ժանրին են պատկանում ցուցադրվող նկարները /թեմային վերաբերվող/:

Ի՞նչու ենք ծառ տնկում:

Ո՞րն է ծառ տնկելու խորհուրդը:

Ի՞նչու են ծառերը կարևոր:

Ծառ տնկելը իր մեջ կյանքի շարունակության խորհուրդ ունի: Մեր երկրի ընդերքը խորացող, ընդերքից սնվող ընձյուղները՝ մեր երազանքները, մեր ապագան սնող երակներն են: Իզուր չի ասված՝ **եթե աշխարհը բարելավելու ձգտում ունես, ծառ տնկիր:**

Իմաստի ընկալում

Ցուցադրել նախկինում կատարած աշխատանքներ,բացատրել կազմությունը,խոսել գույների ու երանգների մասին,մեկնաբանել աշխատանքի կատարման քայլաշարը,ընտրել թղթիհամապատասխան դրվածք /աշակերտների մասնակցությամբ/:

Սահմանել ժամանակ տալ գործնական աշխատանքի մեկնարկը: Նկարելու ընթացքում շրջել, անհրաժեշտության դեպքում տալ համապատասխան ցուցումներ չխանգարելով սովորողի ինքնուրույն գործունեությունը:

Կշռադատման փուլ

Այս փուլում կատարել անդրադարձ կերպարվեստի ժանրերին, սովորողները կհիշեն բնության գրկում իրենց կատարած էտյուդներն ու ճեպանկարները ու կապ կհաստատեն ու հետվություններ կանեն հին ու նոր թեմաների նկարների վերաբերյալ, որ երկու դեպքերում էլ նկարել են բնության պահեր և կիրառել տարբեր գունային գամմաներ:Սովորողները կարտահայտեն իրենց մտքերը ծառ տնկելու խորհրդի և նշանակության մասին:

Կատարել աշխատանքների ընդհանուր ցուցադրում, վերլուծում և ինքնագնահատում ըստ քայլերի ճիշտ պահպանման,որի արդյունքում սովորողը գիտակցում է իր ձեռքբերումներն ու բացթողումները:

Ձևավորված նպատակների հիման վրա ապահովվեց վերջնարդյունքը:Ստորև ներկայացված է վերջնարդյունքը:

<<Նատյուրմորտ>> թեմայով՝

Եզրակացություն

Հանգեցի այն եզրակացության, որ պետք է փնտրել դասերի արդյունավետության բարձրացման այն ուղիները, գործնական աշխատանքների այն ձևերը, որոնց հիմքում ընկած է սովորողի գիտելիքի նպատակային կիրառման գիտակցումը:Սովորողն իր գործունեության ընթացքում ձևավոևում է արդյունքի տեսլական և կարողությունների,հմտությունների կատարելագործման շնորհիվ այն փորձում է դարձնել իրատեսական: Կարևորել մոտիվացիան, որին նպաստում է նաև միջավայրի փոփոխությունը, ու այդ միջավայրերից մեկը բնությունն է, որը երեխային տալիս է ազատություն և կերպարվեստի դասերը դարձնում ավելի հետաքրքիր:

Ուսուցիչը ճիշտ մեթոդների ու միջոցների ընտրության դեպքում կհասնի նպատակին, սակայն սովորողների հետ տարվող աշխատանքները պետք է կառուցված լինեն նրանց տարիքային, անձնային առանձնահատկությունների իմացության հիման վրա, և պետք է, որ ուսուցիչն իր գործունեության վերլուծության, կատարելագործման ու ինքնազարգացման համար օգտվի գիտամանկավարժական տեսական գիտելիքներից:

Օգտագործված գրականության ցանկ և հղումներ

1.<<Կերպարվեստ>> առարկայի Հանրակրթական դպրոցի չափորոշից և ծրագիր, լրամշակված ԿԱԻ, 2011

2.Մ. Պետրոսյան <<Կերպարվեստ>>ուսուցչի ձեռնարկ, 1-4-րդ դասարաններ

3. Եվգենիա Կատալյանովիա <<Ընդհանուր մանկավարժական տեխնոլոգիաներ>>

4. urok.1sept.ru

5.akumb.am

6.Artsandculture.com